

զինովցած դուրս կ'ելեն, որով անուն  
նին մէկ ստըկի կ'ըլլայ, և ուտելու հաց  
չեն ունենար : Երբոր պղտիկ տղոց  
կրթութեանը փոյթ կ'ունենանք, ինչ  
իրաւամք չափահամները երեսի վրայ  
թողունք, և ինչ օգուտ կրնանք քա-  
ղել պղտիկներէն քանի որ մեծերը ան-  
կերթ են :

Խակ աս տեսակ տօնական դպրոց  
հաստատելու կերպն ալ ամենազիւ-  
րին է . նախ՝ պէտք է որ դպրատունը  
որչափ որ կարելի է մեծկակ ըլլայ ու  
եկեղեցւոյ մը կամ հրապարակի մօտ :  
Երկրորդ՝ գրքատուն մը ըլլայ մէջը  
պատմութեան, երկրաշափութեան,  
երկրագործութեն ու արշեստից գրքե-  
րով զարդարուած : Երրորդ՝ դպրա-  
տուն եկողները հարկ է որ իրենց կող-  
մանէ դպրատան օդնեն, հարուստ-  
ներն ալ իրենց առատաձեռնութեը  
հաստատեն . իսկ դպրատան մէջ գրտ-  
նուած քահանան՝ բժիշկն ու վարժա-  
պետը յայտնի է թէ իմաստուն և ըն-  
տիր մարդիկ պիտի ըլլան : Ինդղիայի  
մէջ աս տեսակ դպրոցներու ծախքը  
դիւրաւ ձարելու համար ամէն մարդ  
օրը մէկ փող մը կը վճարէ, որով  
դպրատան չափաւոր ծախքը դիւրին  
կերպով կը հոգացուի :

## ԲԱՆԱՍՏՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱԻԵԼՈՐԴԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

(Պաշտեմիւն :

ԺԱՌՎՉՈՒԹԻՒՆ կ'ըսուի ան արուես-  
տը՝ որով մարդիկ օձերը կ'ընտանեցը-  
նեն ու իրենց ուզածին պէս այլ և այլ  
խաղեր ընել կուտան՝ անօնց : Ի՞ս ա-  
րուեստը խիստ հին է . ուստի նաև  
ոք գրոց ու մեր նախնեաց գրուածք-  
ներուն մէջ ստէալ կը յիշուի ' : { Յու-

1 « Եթէ հարցէ օձ 'ի թովել, ոչ ինչ է առաւե-  
լութիւն թովելին » կ'ըսէ Սողոմոն : Երեմիա մար-  
դարէն ալ կը սպառնայ, « Ես աւասիկ արձակեմ

նաց հին պատմութեանցը մէջ Փափղ-  
ղացի անունով ազգ մը կը յիշուի Մի-  
րիկէի մէջ որ ոչ միայն օձի խածուած-  
քէն չեն վնասուիր եղեր, հապանակ  
օձին խածած տեղը ծծելով՝ թոյնը կը  
հանեն եղեր . և Պլինիոսի ու Պտրա-  
բոնի լսածին նայելով՝ իրենց շողիքը  
կամ պարզ դպչին ալ բաւական էր  
այսպիսի վերքերը ըռընտցընելու .  
ուստի կ'ըսէ Լուկանոս՝ լատին բա-  
նաստեղծը .

Անօրինակ կայ յաշխարհի ժողովուրդ  
ի ժաման օձից մաղկատելոյն անվենաս .  
ԶՄարմարական ասեմ ֆափղայց ըզսերունդ  
Որոց լեզուք ըզդալարեաց հարուն սպաս :

Հիմա ալ նոյն գործողութիւնները  
թէ հնդկաստանցի և թէ ափրիկեցի  
թովիչները կ'ընեն . բայց չգիտցուիր  
թէ ան Փափղացի ըսուած ազգը ինչ-  
պէս անվնաս կը մնան եղեր օձի խա-  
ծուածքէն, և ոչ թէ հիմակուան  
թովիչներուն բուն վարպետութիւնն  
ինչ է : Ի՞ս յայտնի է թէ աս գործո-  
ղութեան մէջ կախարդութիւն կամ  
դիւթութիւն մը չկայ, ու բնական  
արշեստ մըն է . ոմանք կ'ըսեն թէ ա-  
ռաջուց օձին թոյնը կը հանեն, ոմանք  
ալ թէ ասոնք ծածուկ դեղթափ մը  
ունին որ օձը խածածին պէս մէկէն  
վերքին վրայ կը դնեն . ուրիշներն ալ  
կ'ըսեն թէ այսպիսի թովիչները առա-  
ջուց անանկ դեղ մը կը խմեն որ անոր  
ուժովը՝ օձերուն խածուածքէն չեն  
վնասուիր :

'ի ձեզ օձս կոտորիւս, յորս ոչ մտանիցեն թովու-  
թիւնք ' : Մեր Եգիպէտն ալ կ'ըսէ . « Աւանիկ աե-  
սանեմք (զօձ) 'ի հնարագիտութենէ թովաց զգո-  
նացեալ, և իբրև զոււան խաղալիկ է նոցա . . . Եւ  
այլոց զքարբս իգակերպս կալեալ թովութեամբք  
յընաելութիւն մարդկան ածեն, ջրեցուցեալ ըզ-  
թոյնան սպանողս » :



### Խաչկառասի Ուշենէը :

Հոս դրուած պատկերին մէջ կը աեսնուի թէ թովիչները ինչպէս թեւերնին բաց, ազուրնին դարձած, ձեռքերնին ալ մեծամեծ օձեր բւնած, ու կարգ կարգ մէջքերնին թեւերնին ու ստուրնին պըլլած՝ խաղեր կ'ընեն : ( ) ձերը ամէն հնարք կ'ընեն որ զանոնք խածնեն կամ ձեռքերնէն ազատին . բայց անոնք ուժով մը վիզերնէն բըռնած՝ ոչ խածնելու թող կուտան և ոչ ալ փախչելու : Ոմանք ողջ ողջ խածնելով կ'ուտեն օձերը . անոնք ալ սոսկալի շեւլու ձայնով մը օդը կը լեցընեն . ան միջոցին ուրիշ թովիչներ կը նային որ օձը խածնողին ձեռքէն յափշտակեն ու իրենք ուտեն . տգէտ ժողովուրդն ալ պոռալով կանչելով ասոնց ետեէն կ'երթայ, ու կը կարծէ թէ

աս մարդիկը գերբնական կարողութիւն մը ունին, ու իրենց փորը սատանայ մը կայ որ ան օձերուն թոյնը կը ջրէ :

Ճ'եզայիրի մէջ, մանաւանդ ԱՌաքէշի կողմերը շատ մարդիկ կան որ ստակ վաստըկելու համար օձի որսօրդութիւն կ'ընեն, ու կը թողուն որ անոնք իրենց վրայ պըլլուին, զիրենք խածնեն ու շողիքնին վրանին վազցընեն . իրաւցընէ ալ օձերը զասոնք սաստիկ կը խածնեն, բայց չեն մեռցըներ . որով յայտնի կ'իմացուի որ օձերուն թոյնը կամ թունաւոր ակուաները անոնք առաջուց հանած կ'ըլլան :

